

լիք են այրած կամ անայրած ոսկերքներով: նաև արծաթեայ ապարանջաններ, ջրի բաժաններ, հին զբրամներ:

Կարասներն 2—3 մեթր բարձրութիւն ունէին, ոմանք ևս մոխիրով լեցուած էին, զորս ջարդած են կրօնամով շէյխեր իբր անհաւատներէ մնացած պղծեալ անօթներ:

Աւտօի-զարէ, Աբաս և Ասաֆ կան Մզրախ և Բրձօի կրճերու ջրոց մէջ. մերձ ստորոտին:

Այիզան զիւղի բարձունքը մի սար կայ, որ ամբողջապէս ամենարնտիր կաւճէ կազմուած է, այս կաւիճը կը գործածուի Ալաշկերտի վարժարանաց մէջ:

Կելեանայ ձորի մէջ տեսնուած է քանի տեղ հանքածխոյ հեաքեր, այս զիւղին և բիւրապատի մէջ եղած սարը բոլորովին անմատչելի է, խիստ բարձրն տեսնուած է քարայր մի և մէջը ոսկի օրօրոց, որ ի ծագել արևու կը փայլի:

Ջեռեանէ Շեռեանայ զլուխ գնալու համար ի հարաւ պիտի ճանապարհորդենք 2 ժամ, որ աջ կողմերնիս կունենանք Ռամիկան և Խանոյ, իսկ ձախն Շահնազար. նոյն ուղղութեամբ կամ քիչ արևմտեան հարաւ շեղուելով՝ $\frac{1}{2}$ ժամէն Շեռեան կանցնինք, յորմէ մեր ուղղութիւնը շարունակելով 1 $\frac{1}{2}$ ժամէն Կելեանայ գետակից՝ յորմէ 1 ժամէն Այիզանայ ջրից, որ Կէլին և Մզրախայ կողերէն կիջնայ. ուստի կը հասնինք Պէտրը:

Շեռեանայ զլիսից ի Խալեազ բարձրանալիք ուղւոյն այս ու այն կողմը բազմաբոյս թուփերու մէջ կը նշմարուին նաև վայրենացեալ խաղողի որթեր, որք դեռ կը զովայնն ճանապարհորդի զովացեալ կոկորդն: Աբուզէ-